առ Թէոդորոս Պատրիարք, ծանր թուեցաւ յաչս նորա, և սպառնայր առնուլ զկոնդակն Նուիրակութեան 'ի ձեռաց նորին, քանզի ասէր՝ են աստ արք արժանաւորք բազմավաստակք և հաւատարիմք քան զայն, այլ 'ի միջնորդելոյ Պօղոսի ձեռնադրեցաւ նա յաստիճան Եպիսկոպոսութեան։

Յոյնք վերստին կացուցին զԼուսարարն Իւրեանց 'ի Գերեզմանն Քրիստոսի։

Հրդէհ 'ի Կոստանդինուպոլիս 'ի թաղն Պալատու տեւեալ ժամս իբրև 16, յամենայն դարձոյց զբազմութիւն տունս՝ ընդ որս և 2 զեկեղեցիս Յունաց. իսկ Հայոցն զերծաւ բազում աշխատութեամբ և ծախիւք (1812. 'ի 14 Սեպտեմբերի), և զկնի 5 աւուրց 'ի Ղալաթիա Աղալ Գարուսի կոչեցեալ տեղին։ Ժանտ ախտ անդ 'ի մայրաքաղաքին։

Իսկ Մէհէմմէտ աղա Ապուլօսպութ քաղաքապետն Յոսպէի Նորոդեաց զմարտկոցն արեւմտեան մերձ 'ի սրճարանն Հայոց [1], եւ դրաւեալ զտանիս մթերանոցաց՝ չինեաց պարիսպ շուրջանակի ուր զետեղեաց զհրանօթս [2]. եւ զնաւամատոյցն Հայոց անդ արար սրճարան։ Եւ 'ի ժամանակս ուխտաւորաց ելից առաջի դրան վանաց զվաճառողս այլ և այլ իրաց, զոր հրովարտակաւ Արքայի արգիլեալ էր, թող զնեղութիւնս ուխտաւորաց սակս մաքսի, զբեռինս վանաց արգելոյր անդ ամսօրեայ ժամանակաւ, և ոչնչացեալ՝ լինէր վնաս մեծ։ Սա յառաջագոյն յափշտակեալ էր 25 մթերանոցս, 1 խանութ, 2 տուն՝ յոր նստէին ծովային պաշտօնեայք, և մի մեծ տուն արարեալ տեղի Կառավարութեան, որպէս գրեցաք. յորմէ պահանջէր Տեսուչ տեղւոյն Ղազար վարդապետ զվարձս երից ամաց 4627 դահեկան, բայց փոխանակ դրամոց լսէր բանս անարգանաց։ Վասն սոցին իրաց բազում անգամ գրեցին

---

[1] Զայս սրճարան զկնի ժամանակաց մին յայլազգեաց Եբուսաղէմի Աղի Մուհսին կոչեցեալ յափշտակեալ 'ի ձեռաց Հայոց տիրեաց ինքն, և զկնի իւր ցարդ տիրեն սերունդք նորին։ Թէպէտեւ զկնի ժամանակաց յաւուրս Իպրահիմ Փաշայի իշխանին Եգիպտոսի՝ յարուցին վէճս Հայք վասն այնր, այլ չեղեալ յաջողութիւն։

[2] Զայս տեղի յետոյ 1875 թուին վերստին դնեցին Հայք ծանր գնով 'ի Տերութենէ։